



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հավատարմագրման ազգային մարմին»



ՊՈԱԿ-ի տնօրեն

*[Handwritten signature]*

Ն. Մկրտչյան

(անուն, ազգանուն)

« 19 » 05 2017 թ.

N 3-42 հրաման

Հիմք՝ Հավատարմագրման ազգային  
մարմնի հավատարմագրման խորհրդի

2017 թվականի մայիսի 19-ի

N 1 որոշումը

## ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԵԼԻՈՒԹՅԱՆ, ՉԱՓՄԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱՉԱՓԱՐԿՄԱՆ ԵՎ ՉԱՓՄԱՆ  
ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ  
ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
PL-07**

ՄՇԱԿԵԼ Է

Որակի մենեջեր

Նազիկ Արզարյան *[Handwritten signature]*  
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Գործարկման թվականը 01.01.2017թ.

Երևան 2017

## ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԵԼԻՈՒԹՅԱՆ, ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱՀԱՓԱՐԿՄԱՆ ԵՎ ՉԱՓՄԱՆ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Համաձայն «ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 Փորձարկման և ստուգաճշտման լաբորատորիաների իրազեկությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ» ստանդարտի՝ ՓԼ-ները պետք է ապահովեն չափման միջոցների տրամաչափարկումը, չափումների հետևելիությունը և չափման անորոշությունների գնահատումը:

2. Փորձարկման լաբորատորիաները (այսուհետև՝ ՓԼ) փորձարկման արդյունքների ճշտությունը ներկայացնելու համար պետք է գնահատեն չափման անորոշությունները:

ՓԼ պետք է ունենա չափման անորոշությունների գնահատման, չափման միջոցների տրամաչափարկման ընթացակարգ և իրազեկ աշխատակազմ՝ դրանք իրականացնելու համար:

3. Քանի որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս հավատարմագրված է մեկ տրամաչափարկման լաբորատորիա (2017 թվականի փետրվարի 17-ից) և իրականացնում է չափման միջոցների տրամաչափարկում յոթ ուղղություններով, որը մասամբ է ապահովում ՓԼ-ների կողմից կիրառվող չափման միջոցների տրամաչափարկման պահանջը, ապա ՓԼ-ների հավատարմագրման վկայագրերի գործողության ժամկետում հիմք է ընդունվում նաև տրամաչափարկման լաբորատորիաների հետ կնքված պայմանագրերը, որոնց համաձայն սարքերի տրամաչափարկումն անհրաժեշտ է ավարտել մինչև սույն թվականի դեկտեմբերի 30-ը:

Չափումների հետևելիության, չափման միջոցների տրամաչափարկման և չափման անորոշությունների գնահատման համար անցումային շրջան սահմանել՝ **մինչև 2017 թվականի դեկտեմբերի 30-ը:**

4. Սույն քաղաքականության գործողության ժամկետը՝ **մինչև 01.01.2018թ.:**

5. Սույն քաղաքականության վերանայումը կատարվում է ըստ անհրաժեշտության:



